

Արարատ Ստեփանյան
ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԵՎ ԳՅՈՒՄԻԱՅԻՆ ԲՈՒԿՈՎԻՆԱՅԻ
ՄԻԱՑՈՒՄԸ ԽՍՀՄ-ԻՆ

**Խորհրդային Միություն, Բեսարաբիա, Զյուլիսային Բուկովինա, Ռումինիա,
բանակցություններ, բռնակցում, Մոսկվա, պայմանագիր**

Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի միացումը Խորհրդային Միությանը, ինչպես նաև 1939-40 թթ. ընթացքում միջազգային հարաբերություններին նպաստավոր զարգացումը ԽՍՀՄ-ին թույլ էին տալիս Գերմանիայի հետ կնքված չհարձակման պակտին կից լրացուցիչ գաղտնի արձանագրության իրականացնելը՝ կապված Բեսարաբիայի հետ:

1940 թ. մարտի 29-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Խորհրդային Միության Արտաքին գործերի նախարար Մոլոտովը նշեց, որ Խորհրդային ղեկավարությունը չի ընդունում Բեսարաբիան իբրև Ռումինական թագավորության տարածք: Ռումինիային տարածքային պահանջներ ներկայացնելու ժամկետը Խորհրդային կողմից բավականին հաջող էր ընտրված, շարունակվում էին արևմտյան տերությունների միջև ռազմական գործողությունները: Ինչպես նշում են ռումինացի հեղինակներ Ֆլորին Կոնստանտինն ու Դինու Ջուրեսկուն, երբ մարշալ Պետենը ֆաշիստական Գերմանիայից խաղաղություն խնդրեց (1940 թ. հունիսի 17), պարզ դարձավ, որ ընկել է ոչ միայն Ֆրանսիան, այլև ամբողջ եվրոպական համակարգը, այդ թվում և Ռումինիան¹: Բացի դրանից, Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև ռազմական բախումը մոբիլիզացրել էր նրանց ուժերը Արևմուտքում, մինչդեռ Խորհրդային Միությունը ստացել էր գործելու ազատություն Արևելյան Եվրոպայում: Իսկ գերմանական հնարավոր քայլերն հօգուտ Ռումինիայի սահմանափակված էին գաղտնի լրացուցիչ արձանագրությամբ:

1940 թ. հունիսի 23-ին Մոսկվան պաշտոնապես տեղեկացրեց Բեռլինին, որ բեսարաբիական հարցը շտապ լուծում է պահանջում: Մոսկվայում Գերմանիայի դեսպան գրաֆ Շուլենբուրգը տեղեկացնում էր արտաքին գործերի նախարարությանը, որ «Խորհրդային կառավարությունը դեռևս փորձում է հարցը կարգավորել խաղաղ ճանապարհով, բայց մտադրված է ուժ կիրառել, եթե ռումինական կառավարությունը մերժի խաղաղ համաձայնությունը: Խորհրդային նկրտումները տարածվում են նաև Բուկովինայի վրա, որտեղ ապրում է ուկրաինական բնակչություն»²: Նա նշում էր նաև, որ Մոլոտովը, ընդգծելով հարցի անհետաձգելիության հանգամանքը, հույս էր

¹ 6.

² Տե՛ս - . 1939-1941., . 2., . 56:

հայտնում, որ Գերմանիան ոչ միայն չի խոչընդոտի խորհրդային գործողության անցկացմանը, այլև կաջակցի¹:

Ռիբենտրոպը Շուլցենբուրգին հունիսի 25-ին հղած հրահանգում նշում էր, որ Գերմանիան հարազատ է Մոսկովյան համաձայնությանը, սակայն զարմանք հայտնեց Բուկովինայի հարցի վերաբերյալ: Ընդգծելով այն հանգամանքը, թե ինչքան կարևոր են Գերմանիայի համար տնտեսական հետաքրքրությունները Ռումինիայում, առանձնապես նավթային տարածքները և գյուղատնտեսական հողերը, Ռիբենտրոպը նշում էր, որ Գերմանիան խիստ հետաքրքրված է, որ այդ շրջանները չդառնան ռազմական գործողությունների թատերաբեմ: Շուլցենբուրգը հունիսի 25-ին գրում էր Ռիբենտրոպին, որ Մոլոտովի հետ զրույցում ընդգծել է, որ եթե ԽՍՀՄ-ը հրաժարվի Բուկովինայի նկատմամբ պահանջներից, որը երբեք չի եղել անգամ ցարական Ռուսաստանի կազմի մեջ, ավելի հեշտ կարող է լուծվել բեսարաբական խնդիրը, սակայն Մոլոտովը հակադարձել է՝ ասելով, որ Բուկովինան Ուկրաինայի միավորման գործընթացի պակասող, անհրաժեշտ մասնիկն է, այդ պատճառով խորհրդային Միության ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում այս խնդրին²:

Սկզբում խորհրդային ղեկավարությունը պահանջներ ուներ ամբողջ Բուկովինայի նկատմամբ: Իր պահանջների հիմնավորման համար բերում էր մի շարք գործոններ, այդ թվում և էթնիկ գործոնը, սակայն ուկրաինական բնակչությունն ապրում էր հիմնականում Յուլիսսային Բուկովինայում: Մոլոտովի և Շուլցենբուրգի միջև հունիսի 25-ին կայացած վերոնշյալ բանակցություններից հետո խորհրդային կողմը ստիպված էր սահմանափակվել Յուլիսսային Բուկովինայով՝ Չերնովցի քաղաքով³:

1940 թ. հունիսի 26-ին երեկոյան 22.00-ին Մոլոտովը խորհրդային Միությունում ռումինական դեսպանին փոխանցեց վերջնագրի նման նոտա, որտեղ Ռումինիայից պահանջվում էր խորհրդային Միությանը հանձնել Բեսարաբիան և Բուկովինայի հյուսիսային հատվածը: Այս փաստաթղթում մասնավորապես նշվում էր խորհրդային կողմի հետաքրքրությունը Բուկովինայի այն հատվածի նկատմամբ, «որտեղ ապրող բնակչությունը մեծապես կապված է խորհրդային Ուկրաինայի հետ ինչպես իր պատմական ճակատագրի, այնպես էլ լեզվի և ազգային պատկանելիության ընդհանրությամբ»⁴:

Հատկանշական է, որ հիշյալ նոտայով Բեսարաբիան և Յուլիսսային Բուկովինան 1940 թ. հունիսի վերջին անցան խորհրդային Միությանը: Նոտայում գոյություն ունեն ոչ միայն որոշակի անճշտություններ, այլև կան պատմական, էթնիկական և քաղաքական բնույթի կոպիտ սխալներ: Առաջին հերթին նշվում է, որ Բեսարաբիան բնակեցված է հիմնականում ուկրաինացիներով, մինչդեռ հանրահայտ է, որ դարերի ընթացքում այդ տարածքում մեծամասնություն են կազմել մոլդովացիները: Մոլոտովի հետ ոչ պաշտոնական զրույցի ժամանակ խորհրդային Միությունում Ռումինիայի դեսպան

¹ Նույն տեղում, էջ 61:

² Նույն տեղում, էջ 63:

³ Նույն տեղում, էջ 61-62:

⁴

Դավիդեսկուն փորձում էր ուղղումներ մտցնել կապված Բեսարաբիայի բնակչության էթնիկ բնութագրի հետ, սակայն Մոլոտովը շարունակում էր պնդել խորհրդային թեզիսի իրավացիության վրա: Դեսպան Դավիդեսկուն իր կառավարությանը հաղորդում էր. «Ինչ վերաբերում է Բուկովինային, Մոլոտովն ընդգծեց, որ խոսքը գնում է ոչ թե ամբողջ Բուկովինայի մասին, այլ նրա հյուսիսային հատվածի, որտեղ բնակվում են ուկրաինացիներ»¹:

Պետք է նշել, որ այս նոտայում տարօրինակ է Զյուսիսային Բուկովինային տրված գնահատականը, համաձայն որի այն գնահատվում է որպես հատուցման միջոց հսկայական վնասի, որը պատճառվել է խորհրդային Միությանը և Բեսարաբիայի բնակչությանը 22 տարիների ընթացքում, երբ վերջինս գտնվել է ռումինական գերիշխանության տակ: Նոտայում Բուկովինայի վերաբերյալ մոլորվացի ակադեմիկոս Ա. Լազարևը նշում է, որ «ավելի անմիտ և անիմաստ գրություն Բուկովինայի մասին, ինչպիսին այս նոտայում բերվածն է, անհնար է գտնել»²:

Նոտայի հետ մեկտեղ Դավիդեսկունի տրվեց նաև աշխարհագրական քարտեզ, որտեղ մոտավորապես նշված էին այն սահմանները, որոնց նկատմամբ պահանջ էր ներկայացնում խորհրդային Միությունը: Դավիդեսկուն խնդրեց իրեն տրամադրել ԽՍՀՄ-ի պահանջները արտացոլող ճշգրիտ քարտեզ, ինչին Մոլոտովը պատասխանեց՝ նշելով սահմանի հետ կապված մի քանի կարևոր կետեր և հավելելով, որ ճշգրիտ սահմանը կհստակեցվի հետագայում³:

Ստանալով խորհրդային Միության նոտան՝ Ռումինիայի Արտաքին գործերի նախարարությունը այդ նոտայի բովանդակության մասին տեղեկացրեց Գերմանիայի, Իտալիայի, Թուրքիայի, Զոնաստանի և Զարավսլավիայի դիվանագիտական ներկայացուցչություններին: Դիմելով Գերմանիայի և Իտալիայի կառավարություններին՝ Ռումինիայի դեկավար շրջանակը ցանկանում էր պարզել վերջիններիս վերաբերմունքը հիշյալ նոտայի մասին, ինչպես նաև արդո՞ք նրանք միջնորդագիր կուղարկեն Բուդապեշտ և Սոֆիա, որ խորհրդա-ռումինական հնարավոր պատերազմի ժամանակ վերջիններս մնան չեզոք: Միաժամանակ դիմելով Թուրքիային և Զոնաստանին՝ ռումինական կառավարությունը ցանկանում էր իմանալ՝ արդյո՞ք Ռումինիան Բալկանյան պակտի համաձայն կարող է հույս դնել վերջիններիս ռազմական օգնության վրա Բուլղարիայի կողմից ագրեսիայի դեպքում:

Գերմանական դիրքորոշումն արտահայտեց Ռիբենտրոպը, որը Բուխարեստում Գերմանիայի դեսպանին հանձնարարեց Ռումինիայի արտաքին գործերի նախարար Չ. Ջիզուրտային տեղեկացնել, որ Ռումինիայի և խորհրդային Միության միջև պատերազմի կանխարգելման համար գերմանական կառավարությունը կարող է

¹ (. . . , . . .), , « », 1991, . 23.

² . . . , 1939 , « »1991, 8 .

³ Տե՛ս . . . : . . . , . . . , « », 1996, . 353-354:

միայն խորհուրդ տալ Ռուսիանիայի կառավարությանը՝ ընդունել խորհրդային ղեկավարության պահանջները¹:

Իտալիայի վերաբերմունքը ստեղծված իրավիճակի նկատմամբ ևս չէր կարող ուրախացնել ռուսինական ղեկավարությանը: Հռոմում Ռուսիանիայի դեսպանը հաղորդում էր, որ իտալական կառավարության կարծիքով Ռուսիանիայի և այլ եվրոպական երկրների համավարկական շահերից բխում է այն, որ Ռուսիանիան պետք է փորձի խուսափել խորհրդային Միության հետ կոնֆլիկտից: Հաշվի առնելով այն կարճ ժամկետները, որոնք տրված էին խորհրդային Միության կողմից, ռուսինական կառավարության ստացած պատասխանները կարելի է համարել բացասական: Իրականում Ռուսիանիան չէր կարող ապավինել նաև Փոքր Անտանտի կողմից որոշակի օգնության՝ ստեղծված քաղաքական իրավիճակի հետևանքով, երբ Ֆրանսիան ջախջախված էր և կնքել էր կապիտուլիացիայի ակտ, իսկ Մեծ Բրիտանիան Դյունքերում կրած պարտությունից հետո չէր կարող կամ էլ չէր ցանկանա օգնել Ռուսիանիային: Թեև հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիան 1939 թ. դեկտեմբերին երկար բանակցություններից հետո նախապատրաստեց պաշտոնական կոմյունիկե, որի համաձայն խորհրդային Միության կողմից Ռուսիանիայի նկատմամբ ագրեսիայի դեպքում երաշխիքներ կտրվեն միայն այն պայմաններով, որ Թուրքիան բացի նեղուցները, իսկ Իտալիան հանդես չգա ֆրանս-բրիտանական ուժերի կողմից ռազմական գործողությունների ծավալմանը Արևելքում: Պետք է փաստել, որ այս պայմանների իրագործումը գրեթե անհնարին էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆրանս-բրիտանական երաշխիքների գոյությունը խոչընդոտում էր Գերմանիայի հետ հարաբերություններին, ի վերջո 1940 հուլիսի 1-ին Ռուսիանիայի կառավարությունը հրաժարվեց դրանցից²:

Անդրադառնալով խորհրդային Միության Ռուսիանիային հղած նոտայից հետո Բուլղարիայի և Հունգարիայի դիրքորոշմանը, պետք է ասել, որ որոշակի ակտիվություն նկատվեց վերջիններիս կողմից: Բուլղարիան և Հունգարիան նախապատրաստում էին պահանջներ՝ ներկայացնելու Ռուսիանիային Դոբրուժոլի և Տրանսիլվանիայի վերաբերյալ: Ինչպես գրում է «...»-ն, «Հունգարիան փաստացի արդեն անցկացրել է մոբիլիզացիա, չնայած պաշտոնապես այդ մասին չի հայտարարվել»³:

1940 թ. հուլիսի 27-ին Ռուսիանիայում տեղի ունեցավ Թագավորական խորհուրդի երկու նիստ, որոնց մասնակացում էր նաև կառավարությունը: Հիմնականում քննարկվում էին ստեղծված իրավիճակային խնդիրներ. կազմակերպել դիմադրություն կամ համաձայնվել խորհրդային Միության պահանջների հետ: Վերջնական որոշումը կայացնելիս հաշվի առնվեցին այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ռուսինական բանակը կկարողանա՞ դիմակայել բոլոր գործոններով իրեն գերազանցող Կարմիր բանակին,

¹ Տե՛ս . . . , . . . , . . . : . . . 10:

² Տե՛ս «...», 1940, 2 : . . . :

³ Նույնը:

Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից օգնության բացակայությունը, ֆինանսական պատերազմի ժամանակ Գերմանիայի կատարյալ չեզոքությունը¹:

Արդյունքում առաջին քվեարկության ժամանակ Խորհրդային Միության հղած նոտայի բավարարմանը քվեարկել էին 10 կողմ, 11 դեմ, հետագա բանակցությունների անցկացման համար 5 հոգի, ձեռնպահ՝ 1: Իսկ ահա Խորհրդակցություններից հետո կայացած երկրորդ նիստի ժամանակ ձայների բաշխումն արդեն այլ էր. վերջնագրի ընդունմանը կողմ՝ 19, դեմ՝ 6, ձեռնպահ՝ 1 ձայն:

Այն բանից հետո, երբ ռումինական կառավարությունը հասկացավ, որ վերջնագրի ժամկետները հնարավոր չէ երկարացնել, փորձեց պահել Չեռնովցի քաղաքը, սակայն Խորհրդային կառավարությունը վճռական էր տրամադրված:

Խորհրդային նոտային պաշտոնական Բուխարեստի պատասխանում մասնավորապես ասվում էր, որ Ռումինիան պատրաստ է պատվիրակություն կազմել և բանակցություններ վարել երկու երկրների միջև ծագած հարցերի շուրջ: 1940 թ. հունիսի 27-ին ստանալով ռումինական կողմի պատասխանը՝ Խորհրդային Միության ղեկավարությունը այն համարեց ոչ համոզիչ, քանի որ պատասխանի մեջ ուղղակիորեն ասված չէր, որ Ռումինիան ընդունում է Խորհրդային կողմի պահանջը՝ Բեսարաբիան և Յուլիսային Բուկովինան անմիջապես ԽՍՀՄ-ին հանձնելու վերաբերյալ: Խորհրդային կողմը նոր վերջնագիր ներկայացրեց, որտեղ պահանջում էր հունիսի 28-ից 4 օրվա ընթացքում ռումինական զորքերը դուրս բերել Բեսարաբիայից և Յուլիսային Բուկովինայից: Ռումինական կառավարության պատասխանում ասվում էր, որ կանխելու համար Եվրոպայի այդ հատվածում հնարավոր պատերազմի ծանր հետևանքները՝ ռումինական կառավարությունը ստիպված է ընդունել Խորհրդային Միության պահանջները: Այսպիսով, Ռումինիան համաձայնվեց Խորհրդային պահանջների հետ՝ տեղահանման վերաբերյալ: Այն հիմնված էր մի քանի ծանրակշիռ գործոնների վրա.

1. Ֆրանս-անգլիական զորքերի ճակատագրական պարտությունը և Ֆրանսիայի կապիտուլիացիան անհնարին դարձրին 1939 թ. ապրիլի 13-ին Ռումինիային տրված անգլո-ֆրանսիական երաշխիքների իրականացումը,
2. Ռումինական Գլխավոր շտաբի պետի ասելով ռազմաճակատի անբավարար չափերը, մարտավարական պաշարների բացակայությունը անհնարին էին դարձնում ռումինական բանակի դիմադրությունը Կարմիր բանակին երեք ամսից ավելի:
3. Ռումինիայի վրա Գերմանիայի և Իտալիայի գործադրած ճնշումը:
4. Ռումինիայի նկատմամբ Յուլիսային և Բուկովինայի սպառնալից վերաբերմունքը այն պայմաններում, երբ ռումինական կառավարությունը չէր կարող ակնկալել իր դաշնակիցների՝ Չարավսլավիայի, Թուրքիայի և Յունաստանի օգնությունը²:

¹ Տե՛ս СССР-Германия, т. 1, с. 61-62:

² Տե՛ս . . . , . . . , . . . , . . . 15:

Դե-յուրե Ռուսիան Բեսարաբիան և Յուսիսային Բուկովինան զիջեց Խորհրդային Միությանը զգալիորեն ավելի ուշ՝ 1947 թ. փետրվարի 10-ին՝ խորհրդառումինական սահմանի մասին Փարիզյան համաձայնությանը, որով խորհրդառումինական սահմանը մնում էր այնպես, ինչպես կար 1941 թ. հունվարի 1-ին՝ հիմնվելով 1940 հունիսի 28-ի համաձայնության վրա:

Խորհրդային Միության և Ռուսիայի միջև նուտաների փոխանակումից հետո 1940 թ. հունիսի 28-ին խորհրդային զորքերը անցան Դնեստրը և մտան Բեսարաբիա և Յուսիսային Բուկովինա: Ռուսիական զորքերը ստացան նահանջի հրաման: Տեղի ունեցան մահառումինական զինծառայողների զինաթափման դեպքեր, զինված բախումներ, որոնք հանգեցրին կորուստների երկու կողմից:

Բեսարաբիան և Յուսիսային Բուկովինան Խորհրդային Միությանը բռնակցելուց հետո կազմակերպվեցին այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են մեծ քանակությամբ թերթերի և հատուկ զրականության տարածումը բնակչության շրջանում, փողոցներում և տների վրա պաստառների և լրզուկների տեղադրումը: Կարմիր բանակի քաղաքական մարմինները կազմակերպեցին անգամ միտինգներ և մանիֆեստներ:

Հասկանալու համար, թե ինչ նշանակություն ուներ Բեսարաբիայի և Յուսիսային Բուկովինայի բռնակցումը Խորհրդային Միության համար, արժե հիշատակակել այն փաստը, որ այս տարածքները Խորհրդային Միությանը անցնելուց հետո ընդամենը մեկ օր պահանջվեց Լվով-Չեռնովցի երկաթգծի վերաբացման համար:

Բեսարաբիայի և Յուսիսային Բուկովինայի միացումով Խորհրդային Միության Մոլդովական ԻԽՍՀ-ն, որ մտնում էր Ուկրաինական ԽՍՀ-ի մեջ, վերածնվելուց հետո Մոլդովայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության: Այն սահմանակցում էր Ռուսիային և Ուկրաինական ԽՍՀ-ին: Հարկ է նշել, որ Մոլդովական ԻԽՍՀ-ն մինչև Բեսարաբիայի և Յուսիսային Բուկովինայի Խորհրդային Միության կազմ անցնելը չէր կարող դառնալ Խորհրդային սոցիալիստական հանրապետություն, քանի որ դրա համար պարտադիր երեք հատկանիշներից միայն առաջինին էր համապատասխանում: Այդ հատկանիշներն էին.

1. Հանրապետության ծայրամասային տեղադրությունը:
2. Հանրապետությանը բնորոշ ազգի կոմպակտ մեծամասնությունը:
1 միլիոնը գերազանցող բնակչության քանակը¹:

Միայն Բեսարաբիան Խորհրդային Միության կազմի մեջ ներգրավելուց հետո 2 միլիոն մոլդովացիներ Խորհրդային քաղաքացի դառնալով՝ հնարավոր եղավ Մոլդովական ԽՍՀ-ի ստեղծումը:

1941 թ. փետրվարի 10-ին կայացավ ՄԽՍՀ-ի Գերագույն խորհուրդի առաջին նստաշրջանը: Այն հաստատեց ՄԽՍՀ-ի առաջին սահմանադրությունը, ընտրեց ՄԽՍՀ-ի Գերագույն խորհուրդի նախագահության կազմը, կազմավորեց ՄԽՍՀ-ի կառավարությունը և ընտրեց ՄԽՍՀ-ի Գերագույն դատարանը²:

¹ <http://law.edu.ru/book/book.asp?bookID=69021> . . . ,

² <http://law.edu.ru/book/book.asp?bookID=69021> . . . ,

Արարատ Ստեփանյան, Բեսարաբիայի և Յյուսիսային Բուկովինայի միացումը ԽՍՀՄ-ին –
Խորհրդա-գերմանական 1939 թ. օգոստոսի 23-ի չհարձակման պակտին կից լրացուցիչ գաղտնի արձանագրության համաձայն՝ Բուկովինան համարվում էր Խորհրդային Միության հետաքրքրության գոտի, և 1940 թ. հունիսի 26-ին խորհրդային կողմը վերջնագիր ներկայացրեց Ռումինիային՝ Բեսարաբիան և Յյուսիսային Բուկովինան իրեն հանձնելու պահանջով: Ռումինական կողմը, մեծ տերություններից չստանալով աջակցություն, համաձայնվեց խորհրդային պահանջների հետ: Այսպիսով, Բեսարաբիան և Յյուսիսային Բուկովինան մտան Խորհրդային Միության կազմի մեջ:

Арат Степанян, Присоединение Бессарабии и Северной Буковины к СССР –

, 26- 1940 .

Ararat Stepanyan, The accession of Bessarabia and Northern Bukovina to the Soviet Union –
According to the Soviet-German non-aggression pact and an additional secret protocol, Bukovina moved into the sphere of interests of the USSR, and on June 26, 1940 the Soviet Union issued an ultimatum demanding from Romania to repudiate Bessarabia and Northern Bukovina in favor of USSR. Getting no help from the western states, Romania agreed to Soviet demands. Thus Bessarabia and Northern Bukovina moved into the USSR.

Արարատ Ստեփանյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայրց պատմության ամբիոնի մագիստրատուրայի շրջանավարտ

